

խորանաւն հանդերձ . . . եւ յետ փոխելոյն նորա յատեացս մնացեալ ամայի եւ անկատար» (Ձեռ. Էջմ. 290) :

Անապատի խիստ կեանքը շուտով մաշեց անապատաւորներու մարմնական ոյժը, եւ այսպէս յընթացս մէկ տարւոյ (1620|21) ետեւէ ետեւ վախճանեցան առաջին հիմնադիրները՝ Սարգիս եպիսկոպոս, տէր Կիրակոս եւ Պօղոս վարդապետ : Ձեռնարկութիւնը չարունակուեցաւ սակայն, Մովսէս վարդապետի ընդհանուր հսկողութեան տակ : Մովսէս ինքնին, ինչպէս ժամանակակիցները կը վկայեն՝ բացաւ հինգ վանք եւ երեք կուսաստան :

21. ՄԵԾ ԱՆԱՊԱՏԻ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Սարգիս եպիսկոպոս եւ տէր Կիրակոս Երուսաղէմ անցուցած օրերուն ուսումնասիրած էին յաճախակի ացելութեամբ Պաղեստինի վանքերը, ինչպէս նաեւ Գրիգոր Դարանաղցւոյ եւ ուրիշներու Սկիթէի վանքերու արտաքին եւ ներքին կարգերու մասին տուած նկարագրութենէն կազմած էին դադափար, թէ ի՞նչ սկզբունքներով պէտք էր հիմնարկել իրենց ծրագրած անապատը Հայաստանի մէջ : Նոյնպէս Մովսէս վարդապետ, որ մեծ մասնակցութիւն ունեցած է Մեծ Անապատի կազմակերպութեան գործին մէջ, տեսած էր անձամբ Եգիպտոսի եւ Սինայի լեռան վանքերը : Իրենց կազմած ծրագրին պահասները ապա լրացուցին «ի գրոց», գլխաւորաբար